Հայտարարություն

«ՀՀ Լոռու մարզի Ծաթերի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի թափուր պաշտոնն զբաղեցնելու համար

ՀՀ կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N 319-Ն որոշմամբ հաստատված՝ պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության (նշանակման) կարգի 6-րդ եւ 7-րդ կետերի համաձայն՝

ՀՀ Լոռու մարզի «Ծաթերի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի և ՀՀ Լոռու մարզի «Արևածագի Կ. Մելիքսեթյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի միացյալ կառավարման խորհուրդը հայտարարում է մրցույթ՝ հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղն զբաղեցնելու համար:

1.Հաստատության տնօրենի պաշտոնի համար անցկացվող մրցույթին մասնակցելու պարտադիր պայմաններն են՝

1)ՀՀ քաղաքացիությունը.

2)ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքը (հավաստագիր):

2.Մրցույթին մասնակցելու համար հավակնորդը ներկայացնում է՝
1)դիմում՝ հաստատության խորհրդի նախագահի անունով.

2)Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը.
3)հաստատության ղեկավարման իրավունքի հավաստագրի պատճենը.
4)տվյալ հաստատության զարգացման ծրագիրը թղթային եւ էլեկտրոնային տարբերակներով.
5)ինքնակենսագրություն:
Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ: Փաստաթղթերն ընդունվում են ՀՀ Լոռու մարզի Ծաթերի հիմնական դպրոցում **2021 թվականի նոյեմբերի 29 -ից մինչև դեկտեմբերի 17-ը ներառյալ**, ամեն օր՝ ժամը 9:00-ից մինչև ժամը 16:00-ն, բացի հանգստյան (շաբաթ, կիրակի) եւ օրենքով սահմանված ոչ աշխատանքային՝ տոնական եւ հիշատակի օրերից: Մրցույթը տեղի կունենա **2022 թվականի հունվարի 3-ին**՝ ժամը 15:00-ին, Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի «Ծաթերի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ում: Հասցե՝ ՀՀ Լոռու մարզ, գ. Ծաթեր, 7-րդ փողոց, շենք 10:

Տեղեկությունների համար դիմել 091 19-31-77 հեռախոսահամարով: